Առաջին անգամ վարժապետս ինձ տոեց սովորել այբբենարանը: Կարծես, այս ոոպէիս էլ իմ աչքի առջեւն է այն փոքրիկ տետրակը, տպած խոշոր տառերով: Նրա ճակատին նկարած էր մի մեծ խաչ, որի ներքեւ կային այս խօսքերը — «խաչ, օգնեա՛յ ինձ»: Մի քանի ամբողջ ամիսներ, երեսս խաչակնքելով կրկնում էի այդ երեք բառերը: Վարժապետս ասում էր, եթէ ամէն դասի սկզբում խաչից օգնութիւն չխնդրես, ոչինչ չես կարող սովորել: Բայց երեւում էր, որ խաչն էլ խռովել էր իմ գլխին, նա ինձ խելք ու միտք տալու նպատակ չուներ...

Ես մինչեւ այսօր չեմ կարող հեռացնել այն ծանր եւ անախորժ տպաւորութիւնը, որ թողել է իմ վրայ այբ-բենը... նրա ամէն մի տառը, կարծես թէ, ուզում էր վիշապի նման ինձ կուլ տալ... գիշերներն անգամ հանգիստ քուն չունէի... երազների մէջ նոյնքան տանջւում էի, որքան դպրոցում...: Ինձ երեւում էր, որպէս թէ նոն, մեյմունի նման առջեւս պըպըզած, իր զզոելի ռեխը ծըռմռելով, ուզում էր վախեցնել ինձ... ռան, մի մեծ մողէս դարձած, վազում էր որ ծոցս մտնի... Ամէնից աւելի ես ատում էի ճեն, նա միշտ երեւում էր ինձ վիզը ծռած ուղտի պէս... ես շատ էի վախենում ուղտից: Բայց մի տառ, որին ես շատ սիրում էի, էր օն. ես նրան խիստ շուտ ճանաչեցի, որովհետեւ նա նման էր գեղեցիկ Սոնայի բոլորակ աչքերին...

Նազելի՜ Սոնա, քո անունը յիշելու ժամանակ ես բոլորը՜, բոլորը՜ մոռանում եմ, ինչ որ կրեցի այն դժոխքի մէջ... դու էիր իմ մխիթարութիւնը... դու էիր քաղցրացնում իմ տխուր ժամերի դառնութիւնը...

Սոնան վարժապետիս աղջիկն էր: Ես իմ կեանքում չեմ տեսել մի այնպիսի. բարի եւ անմեղ բնաւորութիւն: Պատահում էր, երբ վարժապետս ծեծում էր ինձ, Սոնան մի թաքուն տեղ նստած, լաց էր լինում: Խե՜ղճ աղջիկ, ինչո՞ւ էր լաց լինում նա:

Է. ՍԻՐՈՅ ԱՌԱՋԻՆ ԶԳԱՑՄՈՒՆՔԸ

Վարժապետիս ընտանիքը կազմում էին երեք հոգի՝ կինը, որդին եւ փոքրիկ Սոնան: Նրա կնոջը կոչում էին Գիւլ-ջհան: Չնայելով իր գեղեցիկ անոանը, որ նշանակում է աշխարհի վարդը, երէցկինը աշխարհի ամենաայլանդակ արարածներից մէկն էր: Այսոամենայնիւ տէր հայրը, եթէ չասենք սիրում էր, բայց բաւականին յարգում էր նրան: Թէեւ պատահած ժամանակ մանր հայհոյանքներ տալիս էր, բայց շատ սակաւ էր պատահում, որ ծեծեր նրան: Դա ունէր իր առանձին պատճառները. որպէս մարգարէի առաջին երկրպագուն լինում է իր կինը, այսպէս էլ «աշխարհի վարդը» տէր հօր ամե-